

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

Չորրորդ հաղորդում

**Համաբովանդակ Քրիստոսը՝ որպես բարի երկիրը.
հովիտներում և լեռներում հոսող
առվակների, ակունքների և աղբյուրների երկիր**

Սուրբ Գրքի ընթերցում. Երկ օր 8:7, 11:11-12, Երմ 2:13, 17:7-8,
Եսյ 12:3-6, Հվի 4:14բ

I. Գղտ 3:14-ն ասում է. «Որպեսզի Աբրահամի օրհնությունը Քրիստոս Հիսուսի մեջ հեթանոսներին լինի, որպեսզի մենք խոստացված Հոգուն հավատքի միջոցով ստանանք».

Ա. Աստծու՝ Աբրահամին խոստացած օրհնության ֆիզիկական տեսանկյունը բարի երկիրն էր (Ծնդ 12:7, 13:15, 17:8, 26:3-4), որը համաբովանդակ Քրիստոսի նախատիպն է (Կղս 1:12). քանի որ Քրիստոսն ի վերջո իրական է դառնում որպես համաբովանդակ, կենդանարար Հոգին (Ա Կրթ 15:45, Բ Կրթ 3:17), խոստացված Հոգու օրհնությունը համապատասխանում է Աբրահամին խոստացված երկրի օրհնությանը:

Բ. Փաստորեն, Հոգին, ով Քրիստոսին մեզ համար իրական է դարձնում, մեր ապրումներում բարի երկիրն է՝ որպես մեր վայելքի համար Աստծու առատ մատակարարման աղբյուրը. դա «Հիսուս Քրիստոսի Հոգու առատ մատակարար[ումն]» է՝ որպես Քրիստոսի Մարմնի մատակարարումը՝ Փլպ 1:19:

II. Համաբովանդակ Քրիստոսը՝ որպես համաբովանդակ Հոգին, մի բարի երկիր է՝ «հովիտներում և լեռներում հոսող առվակներով, աղբյուրներով և ակունքներով»՝ Երկ օր 8:7, 11:11-12.

Ա. Առվակները, աղբյուրները և ակունքները խորհրդապատկերում են Քրիստոսին՝ որպես հոսող Հոգու (Հվի 4:10, 14, 7:37-39, Հյտ 22:1), իսկ հովիտներն ու լեռները խորհրդապատկերում են տարբեր տեսակի իրավիճակներ, որոնցում մենք կարող ենք փորձառաբար ապրել Քրիստոսին՝ որպես հոսող Հոգու:

Բ. Ամբողջ Աստվածաշնչով մի գիծ է անցնում, որը վերաբերում է Եռամեկ Աստծուն՝ որպես ջրի՝ Ծնդ 2:10-14, Ելց 17:5-6, Սղմ 36:8-9, 46:4, Հվի 4:10, 14, 7:37-39, Ա Կրթ 10:4, Հյտ 7:17, 22:1.

1. Ծնդ 2:10-ի գետը խորհրդապատկերում է կյանքի ջրի գետը, որի երկայնքով աճում է կյանքի ծառը. այս գետը հագեցնում է մարդու ծառայելով:

2. Սղմ 36:8-9-ի ակունքը վերաբերում է Հորը՝ որպես կյանքի աղբյուրի, իսկ գետը վերաբերում է Հոգուն՝ որպես կյանքի ջրի գետի՝ Հվի 1:4, 7:37-39:

3. Սղմ 46:4-ի գետը խորհրդապատկերում է Քրիստոսի մեջ Հոգու միջոցով Եռամեկ Աստծու՝ որպես Աստծու ժողովրդի համար կյանքի հոսքը:

4. Կյանքի ջուրը Աստծու խորհրդանիշն է Քրիստոսի մեջ՝ որպես Հոգու, ով Իրեն հոսեցնում է Իր փրկագնած ժողովրդի մեջ, որպեսզի լինի նրանց կյանքը և կյանքի մատակարարումը. դրա նախատիպն այն ջուրն է, որը դուրս հոսեց ճեղքված վեմից (Ելց 17:6, Թվց 20:11), իսկ խորհրդանիշն այն ջուրն է, որը դուրս հոսեց Տեր Հիսուսի խոցված կողից՝ Հվի 19:34:
5. Կյանքի ջրի գետը Հյտ 22:1-ում և գետերը Ծնդ 2:10-14, Սղմ 46:4 և Եզկ 47:5-9-ում խորհրդապատկերում են կյանքի առատությունն իր հոսքում. ինչպես նշված է Հվի 7:38-ում, այս մեկ գետն իր հարստության շատ գետեր է դառնում, երբ փորձառաքար ապրում ենք Աստծու Հոգու կյանքի հարստության տարբեր տեսանկյունները՝ Հոմ 8:2, 15:30, Ա Թաղ 1:6, Բ Թաղ 2:13, Գղտ 5:22-23:

III. Չուրը, որ «հոսում է հովիտներում և լեռներում» (Երկ Օր 8:7բ), ցույց է տալիս, որ Քրիստոսը՝ որպես կենդանի ջուր, հոսում է տարբեր իրավիճակներում՝ հմնտ Գ Թգ 20:23, 28.

- Ա. Հովիտները խաչի փորձառություններն են, Քրիստոսի մահվան փորձառությունները, իսկ լեռները՝ Քրիստոսի հարության փորձառությունները՝ Բ Կրթ 1:9, 4:11, 14:
- Բ. Ներբնակվող Քրիստոսը՝ որպես մեր՝ հողե անոթներիս մեջ եղող զանձը, քրիստոնեական կյանքի մատակարարման աստվածային ակունքն է և գերազանց զորությունը, որի միջոցով մենք կարող ենք խաչված կյանքով ապրել՝ հարության կյանքը դրսևորելու համար՝ խ. 7, Փլպ 4:13.
 1. Պողոսն իր և իր համագործակիցների համար ասաց. «Չափազանց ծանրաբեռնվեցինք՝ մեր ուժից վեր, այնպես որ մենք նույնիսկ ապրելու հույսը կորցրինք»՝ Բ Կրթ 1:8-9:
 2. Իրականում հարության դրսևորման համար պահանջվում է մահ, հուսահատություն և հիասթափություն (խ. 4, 7:5-6). խաչի աշխատանքը վերջ է դնում մեր «ես»-ին, որպեսզի մենք կարողանանք վայելել հարության Աստծուն:
- Գ. Պողոսը խաչի սպանիչ ազդեցության ներքո իր սպասավորությունն իրագործելիս հարության կյանքն էր ապրում. «Միշտ մարմնում կրում ենք Հիսուսի մահվան մատնվելը, որպեսզի Հիսուսի կյանքն էլ մեր մարմնում դրսևորվի»՝ 4:10:
 1. Հիսուսը, դրական իմաստով, միշտ սպանում է մեր ներսում եղած բոլոր բացասական բաները, որպեսզի բուժի և կենդանացնի մեզ՝ Փլպ 1:19, հմնտ Ելց 30:23-25:
 2. Երբ մենք առավոտյան մերժում ենք մեզ՝ Աստծուն մեր մեջ ընդունելու համար, օրվա ընթացքում գիտակցում ենք, որ մեր ներսում մեռցվելու գործընթաց է տեղի ունենում՝ հմնտ Առկ 4:18:
- Դ. «Քանի որ մենք՝ կենդանի եղողներս, հանում Հիսուսի միշտ մահվան ենք տրվում, որպեսզի Հիսուսի կյանքն էլ մեր մահկանացու մտեղիում դրսևորվի»՝ Բ Կրթ 4:11.

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

1. Խաչի սպանիչ ազդեցությունը հանգեցնում է հարության կյանքի դրսևորմանը. այս ամենօրյա սպանությունը հարության մեջ եղող աստվածային կյանքի ազատագրման համար է՝ Ա Կրթ 15:31, Բ Կրթ 4:16:
 2. Առաքյալներն այնպիսի կյանքով էին ապրում, ինչպիսին Տեր Հիսուսն էր ապրում երկրի վրա. Տիրոջ կյանքը խաչի սպանիչ ազդեցության տակ եղող կյանք էր, որ հարության կյանքի դրսևորման համար էր, մի կյանքի, որը Նա այնպես էր ապրում, որ Նրա անձը մեկ էր Նրա սպասավորության հետ և Նրա կյանքը Նրա սպասավորությունն էր՝ Հվի 6:14-15, 12:13, 19, 23-24:
- Ե. «Այնպես որ մահը մեր մեջ է գործում, իսկ կյանքը՝ ձեր մեջ» (Բ Կրթ 4:12). երբ մենք Տիրոջ մահվան սպանիչ ազդեցության տակ ենք, Նրա հարության կյանքը մեր միջոցով հաղորդվում է ուրիշներին.
1. Եկեղեցու գոյության և մեծանալու ճանապարհը ոչ թե մարդկային փառքով է, այլ խաչի մահով՝ աստվածային կյանքի կրակի ազատագրման համար՝ Դկս 12:49-50, Հվի 2:19, 12:24-26:
 2. Տերը՝ որպես ցորենի հատիկը, որն ընկավ հողի մեջ, մահվան միջոցով կորցրեց Իր շունչ-կյանքը, որպեսզի կարողանա բազում հատիկների համար հարության մեջ ազատագրել Իր հավիտենական կյանքը. որպես շատ հատիկներ՝ մենք նույնպես պետք է մահվան միջոցով կորցնենք մեր շնչի կյանքը, որպեսզի կարողանանք հարության մեջ վայելել հավիտենական կյանքը:

IV. Երմ 2:13-ն ասում է. «Քանի որ Իմ ժողովուրդը երկու չարիք գործեց. նրանք Ինձ՝ կյանքի ջրի ակունքիս, թողեցին, որպեսզի իրենց համար ջրամբարներ փորեն, կոտրված ջրամբարներ, որոնք ջուր չեն պահում».

- Ա. Աստծու ժողովրդի գործած չարիքներն այն էին, որ նրանք թողեցին Աստծուն՝ որպես իրենց ակունքի՝ իրենց սկզբնաղբյուրի, ու դարձան Աստծուց տարբեր աղբյուրի:
- Բ. Ջրամբարներ փորելը պատկերում է Իսրայելի մարդկային տքնությունը, որով նրանք Աստծուն փոխարինող բան (կուռքեր) սարքեցին. այն, որ ջրամբարները կոտրված էին և ջուր չէին պահում, ցույց է տալիս, որ Աստծուց՝ որպես մեր մեջ բաշխված կենդանի ջրից բացի՝ ոչինչ չի կարող հագեցնել մեր ծարավն ու մեզ Աստծու արտահայտության համար Նրա մեծացումը դարձնել՝ Հվի 4:13-14:
- Գ. Աստծու աչքին ամբարիշտը, չարագործը նա է, ով չի գալիս Իրենից խմելու (Եսայ 55:7). ամբարիշտների չար վիճակն այն է, որ նրանք Տիրոջ մոտ չեն գալիս՝ Տիրոջն ուտելու, խմելու և վայելելու համար. նրանք շատ բաներ են անում, բայց չեն գալիս Տիրոջ հետ շփվելու, Նրան ընդունելու, Նրան ստանալու, Նրան ճաշակելու և Նրան վայելելու. Աստծու առջև սրանից ավելի չար բան չկա՝ 57:20-21, հմմտ 55:1-2:

V. Մենք պետք է սովորություն դարձնենք փրկության աղբյուրներից ջուր քաշելը, որպեսզի կյանքի ջուրը խմենք ու հոսեցնենք՝ 12:3-6, Հվի 7:37-39, Առկ 11:25.

- Ա. Մենք պետք է ցնծությամբ ջուր քաշենք փրկության աղբյուրներից՝ խոսելով Տիրոջը, Տիրոջով, Տիրոջ անունից, Տիրոջ մեջ և Տիրոջ հետ՝ Եսայ 12:3-6, Փլպ 4:6-7, 12, հմմտ Օրհներգ 194:
- Բ. Մենք պետք է փառաբանենք Տիրոջը, ուրախանանք Նրա մեջ, միշտ գոհաբանենք ու երգենք Տիրոջը՝ Ա Թաղ 5:16-18, Փլպ 4:4, Եբր 13:15, Սղմ 119:164, Եփս 5:18-20:
- Գ. Մենք պետք է կանչենք Տիրոջ անունը՝ Գրծ 2:21, Ա Կրթ 12:13, 3, Ա Թաղ 5:17, Ա Կրթ 1:2, Դ-տվ 15:18-19, Ողբ 3:55-56:
- Դ. Մենք պետք է քարոզենք ավետարանը՝ ուրիշների հայտնի անելով, թե ինչ է Քրիստոսը կատարել՝ Հռմ 1:16, Հվի 4:32-34, Փլպ 2:9, Ա Պտ 2:9:
- Ե. Մենք պետք է մեր էության մեջ առաջնությունը Տիրոջը տանք և ամեն ինչ անենք ըստ աստվածային բնության՝ Հյտ 22:1, Կղս 1:18բ, Բ Պտ 1:4:

VI. Ըստ Աստծու տնտեսության՝ Աստծուն վստահողը նման է ջրի մոտ տնկված ծառի, որը խորհրդապատկերում է Աստծուն՝ որպես կենդանի ջրերի աղբյուրի. ծառն աճում է գետի մոտ՝ կլանելով ջրի ողջ հարստությունը. սա Աստծու տնտեսության նկար է, որն իրագործվում է Նրա աստվածային բաշխմամբ՝ Եբր 17:7-8.

- Ա. Աստվածային բաշխումը ստանալու համար մենք՝ որպես ծառեր, պետք է կլանենք Աստծուն՝ որպես ջրի (տե՛ս Ա Կրթ 3:6, Կղս 2:7ա). երբ մատակարարող Աստծու հարստությունը բաշխվում է մեր՝ որպես ծառերի մեջ, այն մեզ կազմում է Աստծու աստվածայնությամբ և Աստծու չափով աճել տալիս (խ. 19). այսպիսով մենք և Աստված դառնում ենք մեկ՝ ունենալով նույն տարրը, էությունը, կազմությունը և տեսքը՝ Հյտ 4:3, 21:11:
- Բ. Աղոթքի իմաստն Աստծուն կլանելն է. որքան շատ շփվենք Աստծու հետ, այնքան ավելի շատ կկլանենք Նրան ու որքան շատ կլանենք Նրան, այնքան ավելի շատ կվայելենք Նրան.
 1. Կա մի օրհներգ, որն ասում է. «Ինչպես որ կամ» (Օրհներգ 765). սա նշանակում է, որ պետք է գալ Աստծու մոտ այնպես, ինչպես կանք՝ չփորձելով բարելավել կամ փոխել մեր վիճակը. մենք Քրիստոսին այսպես ենք ընդունել և պետք է Քրիստոսի մեջ այսպես քայլենք՝ Կղս 2:6-7ա:
 2. Աղոթել նշանակում է գալ Տիրոջ մոտ ճիշտ այնպես, ինչպես որ կանք. երբ գալիս ենք Տիրոջ մոտ, պետք է մեր ներքին վիճակը դնենք Նրա առջև ու Նրան ասենք, որ ամեն հարցում պակասություն ունենք. նույնիսկ եթե տկար ենք, շփոթված, տխուր և անխոս, միևնույն է, կարող ենք գալ Աստծու մոտ. ինչպիսին էլ մեր ներքին վիճակը լինի, դա պետք է բերենք Աստծուն:

3. Մեր վիճակի համար հոգալու փոխարեն պետք է մտնենք Աստծու ներկայության մեջ՝ շփվելու Նրա հետ՝ նայելու Նրան, հայելու Նրան, գովաբանելու Նրան, գոհաբանելու Նրան, երկրպագելու Նրան և կլանելու Նրան. այդժամ կվայելենք Աստծու հարստությունը, կճաշակենք Նրա քաղցրությունը, կընդունենք Նրան՝ որպես լույսի ու զորության, և ներքուստ խաղաղ, պայծառ, ուժեղ ու զորացած կլինենք. այդժամ կսովորենք Նրա հետ կապված մնալու դասը, երբ խոսքը սրբերին սպասավորելիս կլինենք՝ Ա Պտ 4:10-11, Բ Կրթ 2:17, 13:3:

VII. Հվի 4:14բ-ն ասում է. «Այն ջուրը, որ տալու են նրան, նրա մեջ ջրի ակունք կդառնա՝ հավիտենական կյանքի մեջ ներթափող».

- Ա. Մա բացահայտում է հոսող Եռամեկ Աստծուն. 1) Հայրն ակունքն է՝ սկզբնաղբյուրը, 2) Որդին աղբյուրն է՝ ակունքի ի հայտ գալը, իսկ 3) Հոգին գետն է, հոսքը. Եռամեկ Աստված Հոր, Որդու և Հոգու միջոցով հոսում է մեր մեջ և մեր ներքին էությունից՝ ուրիշների մեջ՝ Բ Կրթ 13:14, Հվի 7:37-38:
- Բ. Եռամեկ Աստծու հոսելն ուղղված է «հավիտենական կյանքի մեջ» (4:14բ). Նոր Երուսաղեմը հավիտենական կյանքի ամբողջությունն է, և «մեջ» բառը նշանակում է «արդյունքում» կամ «դառնալով». ուստի Հայրը՝ որպես ակունքը, Որդին՝ որպես աղբյուրը, և Հոգին՝ որպես գետը, հոսում են մեր մեջ ու մեզ հետ և դառնում Նոր Երուսաղեմը՝ որպես հավիտենական կյանքի ամբողջությունը: